ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

2021թ.-ի սեպտեմբերի 01-ին տեղի ունեցավ Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Դասախոսների 2021-2022 ուստարվա ծանրաբեռնվածության հարցը:
2. Ամբիոնում դասավանդվող առարկաների 2021-2022 ուս. տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին – 2021-22թթ. ուստարվա Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության մասին հարցը:

Նիստի նախագահ Կ. Գևորգյանը նշեց, որ 2021-22թթ. ուստարվա ուսումնական ծավալներում մենք ունենք ժամաքանակի ավելացում, որը պայմանավորված է դիմորդների քանակի ավելացմամբ:

Արտահայտվեցին – ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը, դոցենտ Վերա Ավետիսյանը:

2. Լսեցին – Ամբիոնում դասավանդվող առարկաների 2021-2022 ուս. տարվա առարկայական փաթեթների և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատվել 2021-2022 ուս. տարվա առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները: Հանձնարարվեց մինչ սույն թվականի սեպտեմբերի 10-ը ավարտել բոլոր առարկաների ԱՈՒՓ-ները:

3.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

Արձանագրություն 2

2021թ.-ի հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ տեղի ունեցավ Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը: Օրակարգում

1. 2021-2022 ուս տարվա Պարարվեստ մասնագիտության մագիստրոսական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում:
2. 2021-2022 ուս. տարվա բակալավր 4-րդ կուրսի Պարարվեստ մասնագիտության ավարտական աշխատանքների հաստատում և ղեկավարների նշանակում:
3. 2021-2022 ուս. տարվա հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների հաստատում և ղեկավարների նշանակում:
4. Բակալավրիատի և մագիստրատուրայի միջանկյալ ստուգման հարցաշարերի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր

1. Լսեցին – 2021-2022 ուս տարվա մագիստրոսական թեմաների հաստատման և ղեկավարների նշանակման հարցը:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ՝ Կ. Գևորգյանը ներկայացրեց թեմաների ցանկը և նշանակվեցին ղեկավարներ: Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021-2022 ուս. տարվա 1-ին կուրսի մագիստրոսական ատենախոսությունների թեմաներ.

1. Տիգրանյան Աննա - Պարուսույցի աշխատանքը որպես ուսումնադաստիարակչական գործընթաց: Ղեկավար Կարեն Գևորգյան
2. Դանիելյան Հայկ – Հարսանեկան ծիսական պարերն ու դրանց ուսուցման մեթոդների բալետմայստերական առանձնահատկությունները: Ղեկավար Կարեն Գևորգյան
3. Խաչատրյան Զավեն - Մասսայական միջացառումների սոցիալ մշակութային նշանակությունը: Ղեկավար Գագիկ Կարապետյան

4. Քալաշյան Ասատուր – Հայաստանում պրոֆեսիոնալ պարարվեստի ձևավորման և զարգացման միտումները արդի ժամանակաշրջանում: Ղեկավար Յուրա Կոստանյան
5. Քոչինյան Գոռ - Հայկական տարազի պատմագեղագիտական նշանակությունը պարարվեստում: Ղեկավար Գագիկ Կարապետյան

Որոշեցին – Թեմաներն ու ղեկավարները հաստատել:

2.Լսեցին – 2021-2022 ուս տարվա բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների հաստատման և ղեկավարների նշանակման հարցը: Արտահայտվեցին - Նիստի նախագահ՝ Կ. Գևորգյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների ցանկը և նշանակվեցին ղեկավարները:

Որոշեցին – Թեմաներն ու ղեկավարները հաստատել:

4.Հաստատվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի միջանկյալ ստուգման հարցաշարերը:

5.Ընթացիկ հարցեր:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

Արձանագրություն 3

2021թ.-ի նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ տեղի ունեցավ տեղի ունեցավ Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. Ավարտական կուրսերի դիպլոմային և մագիստրոսական աշխատանքների վերնագրերի որոշակի փոփոխություն կատարելու հարցը:
2. Առցանց ուսուցման ընթացքում (հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 15-ը) հանդիպած խնդիրների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին –երկու թեմաների փոփոխության հարցը և այն դրվեց քննարկման:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ՝ Կ. Գևորգյանը և ավարտական աշխատաքի ղեկավարները: Ելույթ ունեցողները նշեցին, որ պետք է կատարել որոշակի փոփոխություններ բեմադրական աշխատանքների մեջ՝ ելնելով թեմատիկայից: Ինչպես նաև պետք էր որոշակի փոփոխություններ կատարել մագիստրոսական թեզերի վերնագրերի հետ կապված:

Որոշեցին –հաստատել նոր տարբերակը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

Արձանագրություն 4

2021թ.-ի դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ տեղի ունեցավ տեղի ունեցավ Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. 2021-22ուս. տարվա առաջին կիսամյակի ամփոփում, պրակտիկաների արդյունքների քննարկում:
2. Ամբիոնի վարիչի կողմից իրականացրած դասալսումների հարցը:
3. Բակալավրիատի և մագիստրատուրայի քննության հարցաշարերի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին- ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի գնահատականը առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ: Նա անդրադարձ կատարեց ամբիոնի կողմից ղեկավարվող պրակտիկաներին, գնահատելով վերջիններիս ընթացքն ու արդյունքը լավ: Կ. Գևորգյանը շնորհակալություն հայտնեց աշխատակազմին ներդրած ջանքների և ուսման մեջ որակի ապահովման համար:

Արտահայտվեցին – ամբիոնի որակի պատասխանատու Սուրեն Խաչատրյանը: Վերջինս նույնպես ներկայացրեց իր գնահատականը ուսումնական քառամսյակում կատարված աշխատանքի վերաբերյալ:

Որոշեցին –2021-22 ուստարվա առաջին քառամսյակի ուսումնական գործընթացը համարել լավ և հաջորդ քառամսյակում ամբիոնի հիմնական գործունեությունը հաստատել:

2.Լսեցին - Ամբիոնի վարիչի կողմից իրականացրած դասալսումների հարցը:

Արտահայտվեցին - Ամբիոնի վարիչի Կ. Գևորգյանը ներկայացրեց կիսամյակի ընթացքում իրականացրած դասալսումները, դիտողություններն ու առաջարկությունները:

Որոշեցին – Հաշվի առնելով Կ. Գևորգյանի դիտարկումները, դրանք կիրառել հաջորդ դասապրոցեսի ընթացքում:

3.Հաստատվեցին առկա և հեռակա բակալավրիատի, մագիստրատուրայի քննության հարցաշարերը:

4.Ընթացիկ հարցեր:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2022թ. հունվարի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018թ. հուլիսի 3-ի N5-L գիտխորհրդի որոշման 1,2,3,6,7,8,9 կետերի վերաբերյալ իրականացման հարցը:
2. Ուսանողների հանձնարարությունների և ուսումնական նյութերի ըստ թեմատիկ տրոհման տրամադրման հարցը:
3. Գնահատվող հանձնարարությունների առկայության անհրաժեշտության հարցը՝ ելենլով մասնագիտական առանձնահատկություններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը, դոցենտներ Գ. Աբրահամյանը, դասախոսներ Ֆ. Քարամյանը, Ս. Միքայելյանը, Գ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հետագա ամբիոնի նիստերում մշտական քննարկան առարկա դարձնել էլեկտրոնային ԱՈՒՄՓ-ների առկայության, դրանցում կատարված փոփոխությունների, բովանդակության և դրանցից բխող էլեկտրոնային առաջադրանքների և տրամադրվող ուսումնական նյութերի հարցը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2022թ. փետրվարի 18-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-22 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատում, վերահաստատում:

2. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների վերահաստատում :

3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում, ամբիոնի աշխատանքային պլանի հաստատում:

4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատման և վերահաստատման հարցը :

Որոշեցին - քննարկում, ուղղումներից հետո ԱՈՒՓ-ները google docs / PDf կամ այլ տարբերակով տեղադրել Classroom հարթակում :

2. Լսեցին - Կ. Գևոգյանը հիշեցրեց հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների ավարտական բեմադրությունների անվանումները:

Որոշեցին – թեմաները հաստատել:

3.Լսեցին – Ամբիոնի և ամբիոնի ՊԴԱ-ի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հարցը: Ամբիոնի վարիչի Կ. Գևորգյանը ներկայացրեց ամբիոնի աշխատանքային պլանը:

Որոշեցին – Ամբիոնի և աշխատակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները հաստատել:

4.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2022թ. մարտի 15-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների վերանայում, վերահաստատում:
2. Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների վերանայում, վերահաստատում:

1.Լսեցին - Նիստի նախագահ՝ Կ. Գևորգյանը ևս մեկ անգամ առաջարկեց վերանայել ավարտական աշխատանքների թեմաները:

Արտահայտվեցին – մ.գ.թ. դոցենտ Վերա Ավետիսյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչներ Յուրա Կոստանյանը, Գագիկ Կարապետյանը:

Որոշվեց - կատարել հետևյալ փոփոխությունները և ուսանողներին թույլատրել նախապաշտպանության: Նշանակեցին նաև նախնական պաշտպանության օր:

3.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2022թ. ապրիլի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

կուլտուրայի ֆակուլտետի ՀԲ ուսուցման նախորդ տարվա շրջանավարտի՝ որակավորման քննության ավարտական աշխատանքի պաշտպանության՝ արդեն 2021-2022 ուստարում մասնակցելու թույլատվության համար դիմած ուսանող Անուշ Արմենակի Մկրտչյանի ավարտական աշխատանքը ղեկավարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը, դոցենտներ Գ. Աբրահամյանը, Գ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոնը պատրաստակամ է ղեկավարելու հեռակա ուսուցման համակարգի ուսանող Անուշ Արմենակի Մկրտչյանի ավարտական աշխատանքը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2022թ. մայիսի 5-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Հանրակրթական դպրոցներում ԿԳ նախարարության կողմից <<Ազգային երգ ու պար>> առարկայի փորձնական ծրագրի ներդրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, պարարվեստի մանկավարժության ամբիոնի դասախոս ազգագրագետ-բանահավաք Արտաշես Կարապետյանը, մանկավարժական ամբիոնի դոցենտներ Գոհար Աբրահամյանը, Վերա Ավետիսյանը, պարարվեստի մանկավարժության ամբիոնի դասախոս, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Կարապետյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները տարակուսանք հայտնեցին առ այն, որ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի <<Պարարվեստի մանկավարժության>> ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը որևէ ձևաչափով ներկայացված չի եղել ՀՀ ԿԳՆ-ի կողմից ստեղծված վերոհիշյալ առարկայի մասնագիտական հանձնաժողովում, այն դեպքում, երբ <<Պարարվեստի մանկավարժության>> ամբիոնը հիմնադրվել է դեռևս 1976 թ. և հանդիսանում է ՀՀ-ում բարձրագույն կրթությամբ պարուսույց-մանկավարժներ պատրաստող միակ հաստատությունը, որտեղ դասախոսում են ՀՀ ժողովրդական արտիստներ, արվեստի և մշակույթի վաստակավոր գործիչներ, մանկավարժական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ, պրոֆեսորներ և էթնոպարագետներ:

Նրանք նշեցին, որ պետք է վերափոխել առարկայի ինչպես անվանումը, այնպես էլ բովանդակությունը՝ նշելով, որ անհասկանալի և անթույլատրելի են համարում ֆիզկուլտուրայի և երգի ուսուցիչներին, գրադարանավարներին և

հարակից այլ մասնագիտությունների մանկավարժներին ընդամենը մեկ ամիս <<վերապատրաստելով>> սիրողական պարային համույթի ղեկավարի և նրա ինքնագործ պարողների մոտ, դարձնել

<<պարուսույց-մանկավարժներ>> և <<Ազգային երգ ու պար>> առարկան ներմուծել հանրակրթական դպրոց, քանզի բարձրագույն կրթությամբ պարուսույց-մանկավարժ դառնալու համար Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի բաժնում իրենց ուսումնառության տարիներին ուսանողները անցնում են շուրջ 50 մասնագիտական և հարակից առարկաներ և անտրամաբանական է այդ ամբողջը սովորել ընդամենը մեկ-երկու ամիսների ընթացքում՝ առավել ևս այն դասավանդել երեխաներին:

Խոսեցին նաև ծրագրում առկա սխալների և բացթողումների մասին.

- Երեխաների պարային կեցվածքի ձևավորման նպատակով բացակայում է դրա դասավանդման մեթոդիկան:
- Պահպանված չեն երեխայի սկզբնական երաժշտառիթմիկ ունակությունների ձևավորման մեթոդը և շարժումների կորդինացիայի զարգացման, ինչպես նաև տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունը:
- Պարուսուցման սկզբնական շրջանի խնդիրներն ու նպատակները /իրանի, ձեռքերի, ոտքերի, գլխի ճիշտ դրվածքի ձևավորումը և հոդահանգուցային ապարատի զարգացումն ու ամրապնդումը/:
- Սահմանելով պարերի ուսուցման որոշակի հաջորդականություն պահպանված չեն «պարզ պարաձևերից դեպի բարդը և դանդաղից դեպի արագը» կարևորագույն սկզբունքները:
- Ճիշտ ընտրված չեն ծրագրում ներառված պարանմուշները, և հասկանալի չէ՝ ինչու է շեշտը դրված Կարնո շրջանի պարաձևերի վրա: Հինգերորդ դասարանի սկսնակ պարողների համար ոչ միայն դժվար է յուրացնել «Քոչարի» պարաձևի ծնկկոտրուկները և երաժշտառիթմիկ պատկերները, այլ նաև՝ անհնար:

- Հաշվի չեն առնված սովորողների սեռատարիքային առանձնահատկությունները:
- Նպատակահարմար չէ հինգերորդ դասարանի դպրոցականին ուսուցանել հարսանեկան ծիսական երգեր ու պարեր:
- Միաժամանակ երգելը և պարելը երեխաների համար շատ բարդ է՝ շնչառական՝ համակարգը շարժումների ժամանակ գործում է անկանոն, արդյունքում կարող են առաջանալ շնչառական բազմաթիվ հիվանդություններ և մասնագիտական բարդույթներ:
- Երբ առարկան դասավանդում են ոչ մասնագետները, ապա սխալ դասավանդման արդյունքում կարող է առաջանալ հակակրանք առարկայի նկատմամբ:
- Հաշվի առնված չեն դեռահասության տարիքի հոգեբանական առանձնահատկույթունները, որտեղ ինքնագիտակցության մակարդակը և հոգեբանական հասունությունը պայմանավորվում են մարմնակառուցվածքային առանձնահատկություններով, սեփական մարմնի նկատմամբ բացասական դիրքորոշումը ուսուցման սխալ մոտեցման արդյունքում հանգեցնում է վարքի դեզադապտիվ ձևերի:
- Հիմնական դպրոցում պետք է դասավանդվի ոչ թե «Ազգային երգ ու պար», այլ «Ազգային պար» առարկան, քանի որ արդեն իսկ դասավանդվում է «Երաժշտություն» առարկան, և անհրաժեշտության դեպքում կարելի է կատարել համապատասխան փոփոխություններ՝ ծրագրում ներառելով տվյալ տարիքին համապատասխան ազգային և հայրենասիրական երգեր: Զուգահեռաբար ուսումնական տարվա ընթացքում առաջարկում ենք կազմակերպել նաև «Ազգային պար» և «Երգ- երաժշտություն» առարկաների համատեղ դասեր (նախատեսվող ժամաքանակի 10- 15 %-ի սահմաններում):

Հատկանշվեց, որ ԿԳ նախարարության համապատասխան հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկված լինեին և շահագրգիռ քննարկումներին այնպայման

մասնակցեին պարարվեստի ոչ թե մեկ կամ երկու մասնագետ, այլ հանրաճանաչ ազգագրագետներ, պարագետներ, դասախոսներ, պարարվեստի գործիչներ, հանրահայտ պարուսույցներ, ինչպես նաև մանկավարժական ու գործնական մեծ փորձառություն և վաստակ ունեցող ճանաչված մասնագետներ:

ՈՐՈՇԵՑԻՆ –Սույն հարցի համապարփակ քննարկման համար դիմել ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի գիտական խորհրդին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2022թ. հունիսի 5-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման, մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության արդյունքների ամփոփում:

2.Ամբիոնի կատարած աշխատանքի տարեկան հաշվետվություն:

1. Դասախոսների գործունեության տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – Պարարվեստի մանկավարժության և նր դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը խոսեց պաշտպանությանը ուսանողների պատրաստվածության, դասախոս/ուսանող համագործակցության և ցուցաբերած արդյունքների մասին:

Արտահայտվեցին – ամբիոնի դոցենտ Գ. Աբրահամյանը, Վերա Ավետիսյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչներ Գագիկ Կարապետյանը, Յուրա Կոստանյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Արտաշես Կարապետյանը: Նրանք նշեցին, որ ընդհանուր առմամբ ավարտական ուսանողների ցուցաբերած արդյունքները գնահատում են դրական: Նիստի նախագահ Կ. Գևորգյանը հավելեց, որ անբավարար արդյունք ցուցաբերած ուսանող չի եղել:

Որոշվեց – Ցուցաբերած արդյուքնը համարել լավ:

2.Լսեցին – Պարարվեստի մանկավարժության և նր դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանն ադրադարձավ ամբիոնի և դասախոսների կատարած գործունեությանը 2021-22 ուս. տարվա

ընթացքում: Արտահայտվեցին – դասախոսներ Ն. Աբովյանը, Ա. Դանիելյանը, Ա. Թադևոսյանը, Ջ. Բեգլարյանը, Հ. Դանիելյանը: Նրանք նշեցին, որ ուսումնական տարվա ընթացքում եղել է ուսանող/դասախոս ակտիվ և աղյունավետ համագործակցություն, եղել են մի շարք միջոցառում-դասախոսություն հանդիպումներ ինչպես տեղի մասնագետների, այնպես էլ արտասահմանից հրավիրված մասնագետների հետ:

Որոշվեց – Տարեկան հաշվետվությունը հաստատել:

1. Ընթացիկ հարցեր:

ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆԻՍՏԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2022թ. հունիսի 21-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական քննություն-համերգի ամփոփում
2. Ընթացիկ հարցեր:

Մինաս Ավետիսյանի ներաշխարհը, բնավորության գծերը, հույզերը, ապրումները, կտավներն ու դրանց մոգական գույները կենդանացել էին ՀՊՄՀ-ի Պարարվեստի մանկավարժություն բաժնի 4-րդ կուրսի ավարտական քննություն-համերգին:

Պարարվեստի ամբիոնի դոցենտ, 4-րդ կուրսի ղեկավար Գոհար Աբրահամյանը խոստովանեց, որ յուրահատուկ վերաբերմունք ունի մեծ ջաջուռցու արվեստի նկատմամբ, այդ է պատճառը, որ տարբեր ոլորտների շուրջ 20 արվեստագետներից ընտրվեց հենց Մինասը:

Մեկուկես տարվա քրտնաջան և հետևողական աշխատանքի արդյունքում ծնված ծավալուն պարաբեմադրությունում երիտասարդ մասնագետների կատարողական ունակություններն էին, բեմադրիչների ստեղծագործական երևակայությունն ու գաղափարական մտահաղացումները:

Նիստի նախագահ Կ. Գևորգյանը վստահություն հայտնեց, որ ամբիոնը կշարունակի զարմանահրաշ կոմպոզիցիներ պարգևել՝ նպաստելով մանկավարժության որակի զարգացմանը, ոլորտում նոր հմտությունների և փիլիսոփայության ձևավորմանը:

Ավարտական քննություն-համերգի աշխատանքները գնահատվեցին գերազանց:

2. Ընթացիկ հարցեր:

ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ